ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

26-ը հունվարի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015Թ-ՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ SMS ՄԻԿՐՈՀԱՐՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ն 7-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի, 16-րդ հոդվածի կետ 33-ի պահանջներով, հիմք ընդունելով Աշտարակ համայնքի ավագանու 20.09.2013թ-ի 10-Ն որոշմամբ հաստատված <Տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության կարգի> 4.2.3 կետը, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակի քաղաքապետարանի կողմից 2015 թվականին ներքոհիշյալ աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների առաջնահերթությունը որոշելու նպատակով կազմակերպել sms միկրոհարցում:
2. Հարցումը կազմակերպել կից հավելվածով ներկայացված հարցերի հերթականությամբ:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 9 *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ	ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	

Չեն մասնակցել Սարիբեկ Օվոյանը, Մուշեղ Տաշչյանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

Հավելված

Հաստատված է համայնքի
ավագանու 26.01.2015թ. N 7-Ա որոշմամբ

SMS ՄԻԿՐՈՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1 Պուրակներում, մարդաշատ վայրերում նստարանների տեղադրում

2 Փողոցներում փոքր աղբարկղերի տեղադրում

3 Մանկապարտեզների համար մահճակալների և այլ գույքի ձեռք բերում

4 Նարեկացի-Մաշտոց փողոցների խաչմերուկում լուսաֆորի տեղադրում

5 Կենտրոնական փողոցների ասֆալտապատում, նշագծում

6 Աջ և ձախ ափերում խաղահրապարակների կառուցում

7 Մայր առվի ցանկապատում

8 Լուսավորության ցանցի ընդլայնում /նաև շենքերի բակեր/

9 Քաղաքի մուտքերի ձևավորում

10 Կենտրոնական փողոցների մայթերի սալիկապատում

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԴԱՏՈՒՄՅԱՆ